## ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 70-ԱՄՅԱԿԻՆ

*2013 թ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի համար հոբելյանական է. նշվում է մեր գիտության հենասյունի հիմնադրման 70-ամյակը: Այս առթիվ ԳԱԱ-ում նախատեսված բազմաբնույթ միջոցառումների շրջանակներում սեպտեմբերի 30-ին ԳԱԱ-ի նախագահության նիստերի դահլիճում հանդիսավորությամբ նշվեց Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հիմնադրման 70-ամյակը: ԳԱԱ նախագահ* Ռաֆիկ Մարտիրոսյանը*, ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար* Յուրի Սուվարյանը*, ՀՀ սփյուռքի նախարար* Հրանուշ Հակոբյանը*, լեզվի ինստիտուտի տնօրեն* Վիկտոր Կատվալյանը *բարձր գնահատեցին ինստիտուտի դերը հայապահպանության ու հայերենագիտության զարգացման հարատև գործընթացում:*

*Սփյուռքի նախարար Հ. Հակոբյանն ընդգծեց, որ ինստիտուտն իր գոյության ընթացքում գործել է հանուն հայ լեզվի պահպանության և ի նպաստ հայ լեզվաբանության զարգացման՝ իրականացնելով բազմաթիվ հետազոտություններ: «Հպարտությամբ պետք է նշել, որ ինստիտուտի կայացման ակունքներում կանգնած են այնպիսի հզոր հայագետներ, ինչպիսիք են Արարատ Ղարիբյանը, Գրիգոր Ղափանցյանը, Գևորգ Ջահուկյանը և ուրիշներ, որոնց փոխարինող սերունդը նրանց թողած ժառանգության արժանի շարունակողն է»,– ասաց նախարարը: Հ. Հակոբյանը, ընդգծելով արտերկրում հայությանն սպառնացող ուծացման վտանգը, նշեց, որ հայրենիքում գիտելիքահենք, մրցունակ քաղաքացիական հասարակության կառուցման գործընթացում պատասխանատու է մեզնից յուրաքանչյուրը, և այսօրվա հրամայականն է՝ նպաստել աշխարհասփյուռ հայությանը որակյալ կրթություն մատուցելուն, որպեսզի յուրաքանչյուր հայ, անկախ բնակության վայրից, տիրապետի մայրենիին, հոգևոր կապերով կառչի ազգային արմատներին:*

*Սփյուռքի նախարարը լեզվապահպանության գործում ունեցած մեծ ավանդի համար ինստիտուտի աշխատակիցներ Լ. Հովհաննիսյանին, Լ. Հովսեփյանին, Վ. Համբարձումյանին, Մ. Աղաբեկյանին, Ն. Սիմոնյանին, Պ. Վարդապետյանին, Ժ. Միքայելյանին, Ա. Հանեյանին, Ջ. Բառնասյանին, Գ. Մխիթարյանին, նախկին աշխատակից, այժմ շվեդիաբնակ Ա. Խաչատրյանին և այլոց պարգևատրեց ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալով, պատվոգրերով ու շնորհակալագրերով:*

*Ինստիտուտի ավագ սերնդի աշխատակիցները հետաքրքիր դրվագներ հիշեցին ինստիտուտի կյանքից՝ գիտական գործունեությանը զուգընթաց կարևորելով նաև անցած դարի իննսունականներին ազգային զարթոնքի, Սպիտակի ողբերգական երկրաշարժի, Արցախյան շարժման ժամանակ իրենց ծավալած հայրենանվեր գործունեությունը: Իրենց ելույթներում*

*բ. գ. դ., պրոֆեսորներ* Լիանա Հովսեփյանը, Վազգեն Համբարձումյանը, Ամալյա Խաչատրյանը, *բ. գ. թ., ինստիտուտի ավագ գիտաշխատող* Մելադա Աղաբեկյանն *ընդգծեցին ինստիտուտի կարևոր դերը հայ լեզվաբանության զարգացման ու հզորացման գործընթացում: Ելույթ ունեցող գիտնական բանախոսները, արտահայտելով լեզվի ինստիտուտի ներկա աշխատակիցների գնահատանքը, սիրով, ջերմությամբ ու երախտագիտության զգացումով հիշեցին ակադեմիկոս Գ. Ջահուկյանի ղեկավարության տարիները. նրանցից շատերը իրենց համարում են մեծ հայագետի աշակերտները և հպարտ են, որ աշխատել են բացառիկ գիտնականի և մարդու ընկերակցությամբ: Հատկապես Գ. Ջահուկյանի ղեկավարության տարիներին (1962–2005 թթ.) լեզվի ինստիտուտն ունեցավ նշանակալի հաջողություններ հայերենագիտության տարբեր ոլորտներում, ձեռք բերեց հայերենագիտական կարևորագույն կենտրոնի համարում ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Կարևորվեց ինստիտուտում Մարո Մուրադյանի նախաձեռնությամբ ձևավորված, հայ մշակույթի մոռացվող արժեքները կորստից փրկելու և տարածելու նպատակով ստեղծված «Ակունք» ազգագրական համույթի գործունեությունը:*

*Լեզվի ինստիտուտի գիտաշխատողներին շնորհավորանքի և դրվատանքի խոսքեր հղեցին ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ* Յուրի Ավետիսյանը, *Գավառի պետական համալսարանի ռեկտոր* Ռուզաննա Հակոբյանը*:*

*Ինստիտուտի անցած ուղին, ձեռքբերումները, առաջիկա անելիքները և ծրագրերը ներկայացրեց ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը. «Հիմնադրման օրվանից լեզվի ինստիտուտը շարունակում է հայ լեզվաբանական մտքի զարգացման նախորդ փուլերի ավանդները, գիտական համագործակցություն է ծավալում ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրյա հայերենագիտական կենտրոնների հետ: Առաջ մղելով գիտական միտքը՝ դարձել է նոր շրջանի հայերենագիտության կարևորագույն կենտրոնը: Այստեղ համակարգված աշխատանքներ են ծավալվում լեզվի հետազոտության հիմնարար ուղղություններով, տասնամյակների ընթացքում ստեղծվում են գիտական մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ աշխատություններ, պատրաստվում են գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող և հմուտ լեզվաբաններ»: Ըստ Վ. Կատվայանի՝ այսօր ինստիտուտի բաժիններում ընդգրկված ավագ, միջին և կրտսեր սերնդի՝ մոտ վեց տասնյակ գիտաշխատողները շարունակում են ուսումնասիրություններ կատարել հայերենագիտության ավանդական բնագավառներում՝ նպատակ ունենալով ամբողջացնել գիտական մեծ արժեք ունեցող այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են հայոց լեզվի քառահատոր պատմությունը (լույս է տեսել Գ. Ջահուկյանի հեղինակած՝ նախագրային ժամանակաշրջանին նվիրված առաջին հատորը), արևմտահայերենի համակողմանի նկարագրությունը, հայերենի պատմական եռհատոր քերականությունը (լույս են տեսել պատմական հնչյունաբանությանը և բառագիտությանը նվիրված հատորները), հայ բարբառագիտական ատլասին վերաբերող ուսումնասիրությունները և այլն: « Հատկապես հրատապ են արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման ուղիների մշակումը, գրական արևելահայերենի անաղարտության և զարգացման, կանոնարկման խնդիրները,*

*ակադեմիական նորմատիվ քերականության, ուղղագրական, լեզվաբանական, նորաբանությունների բառարանների կազմումը, բացատրական բառարանի համալրումը, հայերենի խոսակցական և բարբառային վիճակների համակողմանի ուսումնասիրությունը և այլն»,– նշեց Վ. Կատվալյանը:*

*Նիստը եզրափակեց ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը, որը վստահություն հայտնեց, որ ինստիտուտի 70-ամյա ուղու այս արձանագրումը նոր լիցք կհաղորդի գիտաշխատողներին իրենց հայրենանվեր աշխատանքում:*

*Հ. Գ. Լեզվի ինստիտուտի համար կարևոր է դարձել նաև գիտական նոր և որակյալ կադրերի պատրաստման խնդիրը: Այս համատեքստում հոկտեմբերի 2-ին և 3-ին տեղի ունեցած երիտասարդ լեզվաբանների ամենամյա դարձած հանրապետական երրորդ գիտաժողովը անցավ բարձր մակարդակով, իսկ հոկտեմբերի 17-ից 19-ը ՀՀ ԳԱԱ կայանալիք միջազգային երկրորդ հայագիտական գիտաժողովում լեզվի ինստիտուտն ունի գործուն մասնակցություն:*

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ